

գերծուլթիւնը կ'ապահովուի վերէն տնտեսուած միջոցներով, ընդհանրապէս կաշառք: Արտերը, որոնք դադար չունին թուղթի վրայ ու կ'անցնին մէկ էջէն միւսը տեսարակներուն: Պէտք է թուղթի կապել այդ թշուառական թափառումը: Կը յիշեմ օրեր, ուր տասնով, քսանով արտեր կը գնէի կամ կը ծախէի թուղթին վրայ: Մուրհակը (իր հազարումէկ տեսակներովը) ուրիշ դիւան: Նամակներ գրելը, ինչպէս կարդալը: Կառավարական գիրեր, կարդալը՝ ինչպէս անոնց պատասխանելը: Թղթեղէն ու թանաքեղէն սա փուճ, բայց այնքան իրական, եղերական զբաղումները, ժամանակէ եւ տրամադրութենէ անկախ (կը պատահի, որ կէս գիշերին կանչուիս թուղթ մը խրմբագրելու) տակաւին կը խառնուին, կ'ընդմիջուին ուրիշ աւելի կենդանի կարիքներով: Քեզի կը դիմեն միջընտանեկան վէճերու կարգադրումին համար: Չես կրնար ինքզինքդ մերժել, քանի որ փորձառութիւնը սորվեցուցած է, որ ընկոյզի կեղեւ չլեցնող վէճերը յաճախ արեան կը յանգին, ստեղծելով անդարմանելի բախումներ, մէկ կողմին բացարձակ անճիտմանը առաջնորդող: Պիտի խօսիս մէկուն: Պիտի խօսիս միւսին: Պիտի ունենաս կարեկցուն հոգի: Քուկդ պիտի ընես իրենց ցաւերը: Պիտի ունենաս բառ ամէնուն ջուրին: Բայց մանաւանդ պիտի ճանչնաս բոլորը, օճախ պահող անդամալոյծէն մինչեւ նոր ծնած երեխան, «յականէ յանուանէ», իրենց բնաւորութեան մեծ գիծերովը, իրենց կեանքին մեծ ալօսներովը, ցաւերուն եւ հաշիւներուն բոլոր հանգոյցներովը: Ու տակաւին: Մուրալ՝ անօթի մեռնելու վրայ մէկու մը տունը գիշերը գողտտուկ հաց մը դրկելու բարիքէն սրտապնդրւած: Վազել բոլոր հիւանդներուն, հասկնալ բոլոր ախտերը, բժիշկէն վեր ու արդար հեղինակութեամբ մը, քանի որ արժանիքը չի միջամտեր ապաքինման՝ ինչպէս մահուան իրողութիւնները դառնացնելու: Տարին հեղ մը այդ գեղը կը տեսնէր բժիշկին ոտքը, ան ալ միշտ դժնդակ պայմաններով՝ մեռել մը գերեզմանէն հանելու եւ քննելու, կամ՝ մեռել մը (սպաննուած) գերեզման իջնել արտօ-